



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

30 JUL 2018

61

Անցեազ ձեր  
յաւելած

Առօտ, ջո, գո, շի թերթար

(1904—1905)

# ՄԵՐ ԱՏԱՄՆԵՐԸ

## ՆՐԱՆՑ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԻՒՆԸ

(Նկարներով)

Պազմեց

Մ. ԴԱՀՐԱՄԱՆԵԱՆ

### Թովանդակուրիւնը

Առաջարան Բերանի խորը է և նրա նշանակու-  
րիւնը՝ Առաները, Ինչից են կազմուած մեր ատամ-  
երը, Առաների կատարելիք դեր է և նրանց նշանա-  
կուրիւնը՝ Առաների հիւանդուրիւնները եւ նրանց  
սեակները, Առաների հիւանդուրիւնների պատճուր  
և նրանց սուողապահուրիւնը:

616.3

Դ-28

Առանձին գիւղ է 7 կոպ.

Թիվ 17. 1905 թ.

ՀԵՐՄԵՆԻՎ Մաղաթեան գող. № 15.

(53)

Ա.Եցելուղ ձեի յաւելած «Ա.Թ.ՌԴԱ.ՊԱ.ՀԻՆ»  
Թ.ՎՐԹՈՒ-Ի (1904-1905)

$$\frac{610}{129 - 74}$$

616.3

n-28 up

29


# ՄԵՐ ԱՏԱՄՆԵՐԸ

#### ԵՐԱՅԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

(Ukrainian)

լ ձօ՛ր առցւութե՞ն զայտի ուսումնական օնցութեած  
Կազմեց

Ա. ՂԱՅՐԱՄԱՆԵԱՆ



ԹԻԳԼԻԶ 1905 Թ.

Տպարան „ՀԵՐՄԻԿՈ“ Մաղաթեան փող. № 15.

## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Դ նկատի ունենալով մեր հասարակութեան այն անտարբերութիւնը, որ տածում է նա դէպի իր ատամների առողջապահութիւնը, իսկ միւս կողմից էլ տեսնելով, որ ատամնացան ահանի ծաւալ է սոտանում հասարակութեան մէջ, մնաք ձեռնարկեցինք ներկա աշխատասիրութեանը, ուր նպատակ ունի հայ հասարակութեանը ծանօթացնել ատամների հիւանդութիւնների և նրանց առողջապահութեան ատարական միջոցների հետ:

Նորցնելով մեր ատամները կամ միայն ստրափելի տանշանքների ննթարկելով է, որ մնաք տեսնում և զգում ենք ատամների կարեռութիւնը: Ազգում երբ մեր մէջ չկային մամազէտ բժիշկներ, մեր հասարակութիւնն անխորհրդական կերպով զիմում էր ինքնակոչ բժիշկներին, ոյայնի դաշտերին», որոնք իրանց նախաջրհեղեղեան աճագին ունելիքներով թագաւորում էին նրանց բերանում: ասում եմ թագաւորում էին, որովհետ նրանք լուսարի հիւանդ ատամի փոխարէն ասողըն էին հանում, մէկի տեղ երկուար, պատում, քերթում էին ամրողջ նոդերը, մինչեւ անգամ կոտրում հիւանդի ծնօտը և միշտ էլ անպատճիքում:

Ել չենք ասում, որ ունելիքներն ու դալլարի ձեռները կեղտոտ լինելով, որ շատ հաւանական է, քանի որ օրական մի քանի զուտ խուզելով կամ երես ածիլելով նրանք բնաւ սովորութիւն չունեն ձեռները լւանալու—կարող են հիւանդին վարակել:

Այն ինչ ատամնարում աթիւնն ահազին քայլեր է արել, իսկ մեր հասարակութիւնը զեռ նախալապատռում է գալլաքներին:

Дозволено цензурою. Тифлисъ, 27 августа 1905 г.

սպատճառով կոչում են աղօրիք կամ սեղա-  
նատամներ:

Ընկոյզի միջուկը համարձակ կարող ենք  
ամբողջովին միանգամից մեր բերանը նետել,  
բայց մի մեծ խնձոր, տանձ, գազար չենք կա-  
րող ընկոյզի վիճակին ենթարկել. ուստի անհ-  
րաժեշտ է նաև քան բերան դնելը մանր  
մասերի կտրատել: Լաւ է, եթէ մեղանից իւ-  
րաքանչիւրն իր զրպանում գանակ կամ մի  
այլ կտրիչ գործիք ունի, սակայն բնութիւնը  
մեզ գանակի յուսով չի թողել. նա պարզեել  
է մեզ բնական կտրիչ գործիքներ, այն է մեր  
առաջնատամները, որոնք կոչում են նաև կրտ-  
չիներ: Սակայն մեր ընդունած բոլոր նիւ-  
թերը տանձի, խնձորի նման միշտ փափուկ  
չեն, — յաճախ ընդունում ենք այնպիսի նիւ-  
թեր, որ ո՛չ կարող ենք ամբողջովին մեր բե-  
րանը դնել, ոչ էլ հնարաւորութիւն ունենք  
մեր կտրիչներով մաս-մաս կտրատել: Այդ դեպ-  
քում օգնութեան են գալիս մեր միւս աւե-  
լի ստոր ատամները, որոնք ոչ թէ կտրատում,  
այլ պատառուում են ընդունելիք նիւթը:  
Այդ տեսակի ատամները կոչում են ժանիք-  
ներ կամ օնատամներ:

Յաճախ պատահում է տեսնել, թէ ինչ-  
պէս մարդիկ, մանաւանդ երեխաները մի ջլոտ

## I.

ԲԵՐԱՆԻ ԽՈՐԾԸ ԵՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ  
«Մարդիս բերանը իր մարմնի բանալին  
է», ասել է անդլիացի յայտնի առողջաբաննե-  
րից մէկը:

Եւ իրաւ, բերանն է այն դուռը, որովներս  
են մտնույ մեր մարմնի գոյութեանը նապատող  
անհրաժեշտ մթերքները, ինչպէս օրինակ, հա-  
զար ու մի մննդարար նիւթեր, խմելիքներ,  
օդ և այլն: Սակայն բերանն, այդ անհրա-  
ժեշտ նիւթերն ընդունելիս, միան կրաւորա-  
կան դեր չի կատարում. ընդհակառակն իր  
խորշում զետեղուած միւս օրգանների հետ  
միասին, օրինակ լեզուի, ատամների, գեղձերի  
այնպէս է կազմակերպուած, որ այդ նիւթերը  
մարսելու ու դէպի ստամոքս մղելու գործում  
ներգործական զեր է կատարում: Մասի, հայտ  
կտորը, կամ տանձն ու խնձորը մարսելու հա-  
մար, օրինակ հարկաւոր է, որ նրանք ման-  
րացնուեն, ինչպէս ատում են, աղուեն. և աղ-  
ում են մեր յետին ատամներով, որոնք այդ

մսի կտոր անպատճառ անուշ անելու նպատաւ-  
կով երկու ձեռով բունում են նրա մի ծայրից՝  
իսկ միւս ծայրը ժանիքներին ենթարկում:  
Շատ անգամ ձեռի կողմի ծայրը դուրս է պըրծ-  
նում և նրա ճակատին մի լաւ ապահով տա-  
լիս: Այդպիսի դէմքեր պատահում են մանա-  
ւանդ աղիքի կամ թափանի կտոր ուտելիու  
Ղարաբաղի ժողովուրդը այդ առթիւ նոյն իսկ  
առած ունի հիւսած:

Սակայն բաւական չէ, որ նիւթը կտրտուած  
ու բերանն է դրուած, հարկաւոր է, որ նա շար-  
ժուի, սեղանատամների տակ ընկնի: Այդ ծառա-  
յութիւնը կատարում է մեր լեզուն, որը զարմա-  
նալի շարժողականութիւն ունի: Նա իր սուր  
ծայրով կերակրի կոորները նետում է սեղանա-  
տամների տակ. բայց այդ էլ բաւական չէ: Են-  
թագրենք, որ կերակուրը կտրտուած, լեզի  
միջոցով սեղանատամների տակը դրուած և  
աղացած է. սակայն եթէ այդ կերակրի մա-  
սերը իրար չեն միացած, չոր կտորներով այս  
ու այն կողմն են ընկած, այն ժամանակ  
նրանց կուլ տալը դժւարանում է. հարկա-  
ւոր է, որ նրանք թացանան, միանան և ո-  
րոշ շաղախ կազմելով լեզի շնորհիւ կում-  
կում կուլ գնան: Ահա այդ դէմքում էլ օդ-  
նութեան են գալիս բերանի խորշում գլու-

նուած գեղձերը, որոնք շարունակ թուք  
պատրաստելով աղուած կերակրին ցանկալի  
ձևն են տալիս: Էլ չենք ասում, որ բերանի  
խոռոչը իր բոլոր գործարաններով նպաստում  
է մեր խօսելուն, մեր դէմքի գեղեցկութեանը:

Բայց բերանի խորշը միայն մեր մարմնի  
օգտակար նիւթերը չի ընդունում: յաճախ ան-  
գիտակցաբար այնպիսի. նիւթեր ենք ընտրում,  
որոնք թունաւորում են մեր ամբողջ կազմ-  
ւածքը և ծանր հետեանքներ առաջ բե-  
րում, մինչև անդամ մահ պատճառում, եթէ  
ժամանակին բժշկական օդնութիւն չի տըր-  
ւում: Այդ տեսակէտից շատ անգամ մեր լե-  
զուն արթուն պահապանի դեր է կատարում  
և ահա թէ ինչպէս. լեզուն, բացի կերա-  
կուրն ատամների տակ մղելուց, նրա կուլ գնա-  
լուն և մեր խօսելուն նպաստելուց, իմանում  
է նաև կերակրի համը, քաղցրութիւնն ու  
դառնութիւնը: Յաճախ շտապելուց կամ  
մթութեան պատճառով կարող ենք սովորա-  
կան, անվաս նիւթերը շփօթել վուանդաւոր  
նիւթերի հետ և անուշ անել, ինչպէս օրի-  
նակ սովորական աղը կարող ենք շփօթել  
վտանգաւոր աղերի, մկնդեղի հետ: Այդպիսի  
դէմքերում օդնութեան է գալիս մեր լեզուն.  
նա ընդունած նիւթի անսովոր համը, դառ-

նութիւնը զգալով, միջոց է տալիս մեզ  
ընազդմամբ դէն շպիտելու մեր քերանի նիւ-  
թը և այզպիսով վտանգից ազատուելու։ Դրժ-  
բախտաքար մեր լեզուն ամեն նիւթի վերա-  
բերմամբ անզօր է այդ ծառայութիւնն անե-  
լու, որովհետև նա զգում է նիւթի համը,  
միայն այն դէպքում, երբ այդ նիւթը քերա-  
նում լուծում է, ինչպէս օրինակ շաքարը,  
աղը։ Վերջապէս չէ՞ որ մենք կարող ենք  
նիւթերը նաև միանգամբ կուլ տալ։ Ասած-  
ներից հետեւում է, որ մենք լուրջ ուշա-  
դրութիւն պիտի դարձնենք մեր ուժելիքնե-  
րի ու խմելիքների վրա։ Այս ամբողջ գիրքը այս բոլորից, բերանի խո-  
ռոչը մի բուն է հազար ու մի տեսակ ման-  
րէների, որոնք ընկնում են այդտեղ օդի, փու-  
շու միջոցով։ Այդ մանրէները մարդկութեան  
ամենաահեղ թշնամիներն են, ուտոի պէտք է  
ամենաեռանզուն կոիւ մզել։ Նրանց դէմ նրանց դէմ կռւելու ամենազօրեղ միջոցը  
մաքրութիւնն է։ Եթէ մենք ուշադրութիւն  
ենք դարձնում մեր գլխի, մազերի, ձեռների,  
շորերի, մաքրութեան վրա, ուր այդ մանրէ-  
ները քիչ են, ուրեմն որքան աւելի ևս ու-  
շադրութիւն պիտի է դարձնենք մեր բերա-  
նի մաքրութեան վրա, քանի որ նա միլիո-

նաւոր մանրէների մի բուն է, որոնք բարե-  
պատեհ պայմաններում իրանց բազմանալու-  
համար յարմար հող գտնելով և (ապա) մեր  
արեան մէջ ընկնելով, վարակում են մեր ամ-  
բողջ կազմւածքը և յաճախ մահ պատճառում։  
Իսկ իբրև յարմար հող միկրօբների հա-  
մար ներկայանում են բերանի խոռոչում գե-  
տեղուած օրգանների բորբոքութիւնն ու հի-  
ւանգութիւնները, վերքերն ու քերթւածները։  
Յաւում է ատամի, նա ամբողջ գիրքին քայ-  
քայման է ենթարկուած, փթռում է։ Մանրէն  
արդէն այդտեղ թագաւորում է և, եթէ գու-  
ժամանակին բժշկի օգնութեան չես դիմում,  
ատամի հիւանդութիւնը մինչեւ անգամ կա-  
րող է ծնօտներին անցնել, փթացնել և ապա  
միլիոնաւոր մանրէներով անցնել արեան մէջ  
և վարակել ամբողջ մարմինդ։  
Անգիտակցաքարի, պատահմամբ վնասում  
ես լեզուդ, լնդերդ, փոքրիկ վերք առաջ  
բերում եթէ աննշան է վերքը և բերանիդ  
մաքրութեան վրա ուշադրութիւն չես դարձ-  
նում, իսկ լուրջ վերքի ժամանակ բժշկին  
չես դիմում էլի երեւան է գալիք մանրէն,  
բերանումի մնացած կերակրի մնացգրիները  
նեխուում են, ուր մանրէն կեանք սահնակով  
ու բազմանալով վեասուած տեղով անցնում է

արեւան մէջ և անսսպասելի բարդութիւններ առաջ բերում:

Ատամդ ցաւել—վերջացել է ու կորցրել է պսակի զգալի մասը, բայց բերանումդ դեղոցուած են մնացել նրա մի քանի սուր բեկորները, որոնք շփուելով ներսից թշերի հետ, փոքրիկ խոցեր են առաջ բերում և այդպիսով՝ դարձեալ մանրէների ներս մանելուն նպաստում:

Կեանքումդ սովորութիւն չես դարձրել նախաճաշիկից, ճաշից և ընթրիքից յետո բերանդ մաքրել, ողողել մաքուր ջրով, խոզանակներով հեռացնել ատամներիդ արանքներից կերակրների մնացորդները, և սրանք, երկար մնալով բերանում, նեխւում են ու նախ, զզուելի հոտ արձակում բերանիցդ և երկրորդ առողջ ատամներդ ֆնասում—փչացնում: Այս մի քանի օրինակները ցոյց են տալիս, թէ որպիսի մեծ նշանակութիւն ունի բերանի: մաքրութիւնը իր մէջ զետեղուած օրգանների վերաբերմամբ մասնաւորապէս և մեր աժբողջ մարմնի համար ընդհանրապէս:

Թո՞ղ ընթերցողը չմոռանա, որ բերանը մարդիս մարմնի բանալին է, հետեւապէս և՝ ամենախիստ ուշադրութեան ու մաքրութեան արժանի:

## II. ԱՏԱՄՆԵՐԸ

Տասնեութ տարեկան պատանին և աղջիկը 32 հատ ատամ ունեն: Ատամները մարդիք ամբողջ կեանքի ընթացքում երկու անգամ են փոխւում: Առաջին շրջանի ատամները սկսում են բուսնել մանկան  $\frac{1}{2}$ -ից— $\frac{2}{3}$ -ամարեկան հասակը: Մանուկն այդ շրջանում ունենում է միայն 20 ատամ: Սակայն այդ ատամները մշտական չեն, այլ ժամանակաւոր, որովհետև մանկան 6 տարեկան հասակից լսկուում են թափուել և նրանց տեղը բու մնում են նոր ատամներ, որոնք կարող են մինչև կեանքի վերջն էլ պահպանուել, եթէ միայն արտաքին ֆնասակար պատճառներից չհետանդանան ու չքայքայուեն: Թափուող ատամները կոչում են կարնատամներ կամ ժամանակաւոր ատամներ, իսկ նրանց տեղը բուսած նոր ատամները կոչում են մետական ատամներ:

Մի քանի հեղինակներ պնդում են, որ մարդս կարող է երեք անգամ ատամ փոխել. նրանք օրինակներով ցոյց են տալիս, որ եղել են դէպքեր, երբ 60—80 տարեկան ծերունիները նոր ատամներ են հանել: Ընդհակառակն ուրիշները հերքում են այդ կարծիքը և ասում, որ այդ ատամները կամ այն ատամներն

են, որոնք ծնօտի վրա տեղ չլինելու պատճառով ժամանակին չեն կարողացել երևան դալ, այլ դուրս են եկել, երբ թափուել են իրանց ընկեր ատամները, կամ թէ չէ դրանք աւելորդ ատամներ են, որոնք նոյնպէս ծնօտի վրա տեղ չգտնելու պատճառով երևան են եկել յարմար գէպքում: Այս վերջին կարծիքն աւելի հաւանական է: Սակայն այն էլ պէտք է ասենք, որ այդպիսի գէպքերը չափազանց հազւադիւտ են:

Քիչ առաջ ասացինք, որ մանկան 6 տարեկան հասակից սկսած թափում են նրա կաթնատամները, որոնց փոխարինում են մըշտականները:

Այսաեղ հետաքրքիր է այն երկոյթը, որ կաթնատամները թափում են այն կարգով, ինչ կարգով որ բուսնում են:


Մշտական ատամների բուսնելու ժամանակամիջոցն ընդհանրապէս ընդունուած է հաշուել 6—18 տարեկան հասակը:

Բացառութիւններ այստեղ ևս, իշարկէ լինում են, օրինակ շատ անգամ իմաստոթեան ատամը գուրս է դալիս 25, 30 և այլ տարիներում:

Մեր բոլոր ատամները, իրանց ձեւի և պաշտօն վարելու տեսակէտից երեքի են բա-

ժամանում. ա) կտրիչներ, բ) ժանիքներ կ գ) սեղանատամներ (նկ. 1):

Նկ. 1.



Սեղանատամները բաժանում են երկուսի. 1) մեծ և 2) փոքր սեղանատամներ: Վերջին սեղանատամը կոչում էնակ իմաստոթեան ատամ. սա բոլոր տամներից ուշ է դուրս գալիս:

Առաջին 8.

Վերին ծնօտն իր ատամներով: ատամը, չորս 16, 17—կտրիչներ, 18—ժանիք, 19—երկու պլիքին, կու փոքր սեղանատամներ, 20, 21 և 22—չորսը ներքին ծնօտի վրա կտրիչի զեր են կատարում, ուստի և կոչում են կտրիչներ:

Կտրիչներից յետո գալիս են 4 ատամ. — երկուսը վերին, երկուսը ներքին ծնօտի վրա,

որոնք պատառ-պատառ են անում ուսելիքը, ուստի կոչում են ժամիներ կամ ընատամեմեր:

Ժանիքներից յեռո գալիս են 20 ատամ, — 10 վերին, 10 ներքին ծնօտի վրա, որոնք կերակուրը մանրացնում, աղում են, ուստի կոչում են ալօրիֆ: Ազօրիքները կոչում են նաև սեղանատամեմեր:

Մեր երեք տեսակի ատամները տարբերում են իրարից թէ իրանց ձևով և թէ մեծութեամբ:

Ընդհանրապէս պէտք է ասել, որ վերին ծնօտի իրաքանչիւր ատամն աւելի մեծ է, քան ներքին ծնօտի իրան համապատասխան ատամը:

Թէ վերին և թէ ներքին ծնօտների կարիչները, ժանիքներն ու փոքր սեղանատամները մի-մի արմատ ունեն, բացի առաջին փոքր սեղանատամից, որն ընդհանրապէս երկու արմատ է ունենում:

Վերին ծնօտի սեղանատամները 3 արմատ ունեն, թէև պատահում է նաև 4-ը, իսկ ներքին ծնօտի սեղանատամները 2 արմատ ունեն, պատահում է նաև 3-ը:

Կորիչները թիակի ձև ունեն:

Ժանիքներն աւելի հաստ ու երկար են,

քան կտրիչները կօնաձեւ արմատներով և սուր գագաթով:

Թէ մեծ և թէ փոքր սեղանատամներն արդէն բոլորովին զանազանուում են առաջնատամներից Դրանք նաև աւելի մեծ են, քառանկիւնի ձև ունեն, գագաթները տափակ ու խորդուբորթութիւններով, որով նպաստում են կերակուրն աղալուն:


Մեր բերանի ամենամեծ ատամն առաջին մեծ սեղանատամն է, որը վեցերորդն է, հաշուած առաջին կենդրոնական մեծ կտրիչից:

Երկրորդ սեղանատամը քիչ փոքր է առաջնից:

Նոյն ձևն ու դասաւորութիւնն ունեն կտրթնատամները, ինչ որ շշտականները, մի-

նկ. 2.

այն առաջիններն աւելի փոքր ու կարճ են:



Երկու տամ:

Վերին մատն անւանում է պասկ, ցածի մասը—արմատ, իսկ մէջտեղը—ամբու:

Մշեն ատամ բաժանուում

է երեք մասի. ա) պասկ,

բ) պարանոց կամ ըլինի

և դ) արմատ (նկ. 2):

Պսակն ատամի այն մասն է, որ ազացուած է բերանի խոռոշում, իսկ արմատ կազմակերպուել մանկան աշխարհային կեանայն մասն է, որը խոր նստած է ծնօտի փոսիկում։ Պսակի և արմատի միջին տարածութիւնը կոչում է շինք։ Ատամաբոյժն ատամի հանելիս ունելիքով շնչքին է յենուուղ գալիս (նկ. 3)։

Մեր ատամները վերին և ներքին ծնօտների վրա այնպէս են դասաւորուած, որ երկու ծնօտների վրա էլ աղեղանման շրջան են կազմում։ Վերին ծնօտի աղեղաշրջանն ընդհանրապէս քիչ մեծ է լինում ներքին ծնօտի աղեղաշրջանից, որի շնորհիւ էլ ընդհանրապէս բերանը փակելիս վերին ծնօտի առաջնատամները ներքինների վրա կարծես թէ փոքրիկ ամպհովանի են կազմում։ Ծնօտների ու ատամների այդպիսի յարաբերութիւնը կանոնաւոր է հաշում։


Բերանը փակելիս երկու ծնօտների կըտրիւներն իրանց ծայրերի մակերևույթով ուղիղ իրար վրա են ընկնում. այդ տեսակ կծելը ուղիղ է կոչում։

Վերջապէս բերանը փակելիս վերին ծնօտի իւրաքանչիւր ատամ ընկնում է ներքին ծնօտի երկու ատամի վրա։

Ատամները յղանում են դեռ մանկան սպամային դրսւթեան մէջ։


Կաթնատամների պսակները սկսւում են կազմակերպուել մանկան աշխարհային կեանայն մասն է, որը միայն 5-րդ ամսում, որոնք անդադար ձնշում գործ դնելով լնդերքի վրա բարակայթիւնը կոչում է շինք։ Ատամաբոյժն անում և վերջիվերջո պատռում ու դուրս են ատամի հանելիս ունելիքով շնչքին է յենուուղ գալիս (նկ. 3)։

Նկ. 3.



ա, ա—կաթնատամների արմատները. բ, բ—մացորդ ատամների սպամերը,

Ատամները դուրս են գալիս նախ ներքին և ազակ վերին ծնօտի վրա. սպակայն բացա-



ոռութիւններ լինում են, այսինքն նախ բուսնում են վերին և ասպա ներքին ծնօտի վրա:

Առաջին ատամը, որ բուսնում է ներքին ծնօտի վրա, դա առաջին կենդրոնական մեծ կտրիչն է: Առելի ճիշտ կլինէր, եթէ ասէինք առաջին զոյգը, որովհետեւ ատամները համարեա թէ զոյգ-զոյգ են երեան զալիս, թէ ի բացառութիւններ, իհարկէ, լինում են:

Ներքին ծնօտի զոյգ ատամի դիմաց բուսնում է վերին ծնօտի համանուն ատամների առաջին զոյգը: Աղա բուսնում են կողքի մանր կտրիչները, իսկ զրանց զիմաց վերին ծնօտի համանուն ատամները և այդպէս մինչեւ վերջ:


Եատ անգամ այս կամ այն կաթնատամը ժամանակից ուշ է ընկնում, այն ինչ այդ ժամանակամիջոցում մշտական ատամն արդէն ճիղեր է թափում դուրս դալու, բայց օրինական ճանապարհով հնարաւորութիւն չունի դուրս դալու, որովհետեւ ուշացած կաթնատամը նրան խանգարում է—շեղում է ճանապարհից և ծուռ է բուսնում:

Ծնողները տեսնելով, որ կաթնատամները շատ թէ քիչ շարժւում են, երբեմն իրանք են հանում այդպիսի ատամները: Սակայն այս կամ այն ատամի հանելու անհրաժեշտու-

թիւնը միայն մասնագէտի գործ է, որովհետեւ յաճախ ժամանակից առաջ կաթնատամի հեռացը ընտելլը իր վնասակար ազդեցութիւնն է ունենում մշտական ատամի և ծնօտի վրա: Էլ չեմ առում, որ կեղոսոտ ձեռներով մանկան բերան մտնելլը կարող է լուրջ հետեւանքներ առաջ բերել:

Հասկանալի է, ուրեմն, թէ ինչո՞ւ անհրաժեշտէ առամմաբուժի ներկայութիւնը:

### ԻՆՉԻՅ ԵՆ ԿԱԶՄՈՒԽԱԾ ՄԵՐ ԱՏԱՄՆԵՐԸ Նկ. 4.



1) արծնապակի, 2) առամմոսկր, 3) շաղախ, 4) ատամի խորշը:

Մեր ատամները կազմուած են երեք կարծր նիւթից, որոնք են. ա) փղոսկր կամ արծնապակի (զմալ), բ) ատամոսկր կամ դինտին (գ) օսղակ (պեմենտ), (Նկ. 4):

Դէստինն ատամի բաղդրութիւններից ամենամեծ մասն է կազմում: Նա թէ իր կազմութեամբ և թէ բաղադրութեամբ նման է ոսկրին և իր մեջ պարունակում է փոքրիկ թելանման խողովակներ, որոնք դինտինի խողո-

վակներ են կոչում: Դէնտինն իր կենդրոնում մի խոռոչ է կազմում, որ սկզբում համարեա թէ ատամի պասկի ձևն ունի, իսկ արմատի ծայրին վերջանում է փոքրիկ խողովակով: Այս խոռոչն ու իր շարունակութիւն կազմող խողովակը լցուած են ատամի զգայուն նիւթով, որ կակդան կամ պուլպա է կոչում:

Հասկանալի է, որ մի քանի արմատ ունեցող ատամի արժանախողովակներն ևս լցում են պուլպայով:

Ինչպէս ասացինք, պուլպան ատամի ամենազգայուն մասն է. իսկ զգայուն է նրա համար, որովհետև արմատախողովակի միջոյով ծնօտի ոսկրուղեղից իր մէջ է ընդունում արեան անօթներ և զգայուն ներվեր, որոնցից առաջինով մնում է պուլպա, իսկ երկրորդով՝ զգում է:

Դէնտինը իր մէջ պարունակում է մինչեւ 70% ֆօսփորաթթւի և ածխաթթւի կրային մասեր:

Դէնտինն արտաքուստ պատաժ է արձնապակու կարծր շերտով: Արձնապակին ատամի բաղադրիչ մասերից ամենակարծրն է: Որքան արձնապակու շերտը հաստ է, այնքան ատամն ուշ է փշանում, որին իբրև ապացոյց ժառայում է այն, որ ատամները փշանում են հէնց

այն մասից, ուր արձնապակու շերտը բաւական բարակ է, ինչպէս օրինակ սեղանատամների ծամող մակերեսով թների փոսիկների մէջ:

Շաղախն էլ իր կազմութեամբ նման է ոսկրին, միայն այն տարբերութեամբ, որ իր մէջ խողովակներ չեն պարունակում: Ինչպէս արձնապակին ծածկում է պասկը, նոյնպէս էլ շաղախը պատում է նրա ատամը:

#### IV.

### ԱՏԱՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԴԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԸ

Մարդուս առողջ ու լրիւ ատամները երեք գլխաւոր պաշտօն ունեն կառարելու:

ա) ընդունած կերակուրը կտրտելով, պատռուելով ու ծամելով աղալ, բ) դէմքին գեղեցիկութիւն տալ և գ) մեր առողանութեան նպաստել:

Բացի ատամների անմիջական հիւանդութիւններից, կան ուրիշ ընդհանուր հիւանդութիւններ ևս, որոնք կողմնակի կերպով նպաստում են ատամների փշանալուն, ինչպէս օրինակ տենդը, վատ ցաւը, ստամոքսի խանգարումը յաճախ տեղի է ունենում կերակուրը

չմարսելուց, որ մասամբ հետևանք է լուս  
չծամելուն:

Մեր մարմնի բոլոր անդամները, որոնց  
թւում նաև առամները, բաւարար անունը  
չառնելով թուլանում, տկարանում և աւելի  
շուտ են այս կամ այն հիւանդութեան են  
թարկում:

Ուրեմն, կերակուրը լաւ չճամելով մենք  
ոչ թէ միայն մեր առամներն ենք վտանգի  
ենթարկում, այլ և մեր ամբողջ մարմինը:

Առամների երկրորդ գերը դէմքին գեղեց-  
կութիւն տալն է: Երբ մեր առամները թափ-  
ւում են, այն ժամանակ այտերը ներս են  
ընկնում և երիտասարդ դէմքին ծերունու  
պատկեր տալիս:

Առամների երրորդ պաշտօնը մեր առո-  
գանութեան նպաստելն է: Ինչպէս յայտնի  
է մեր խօսելուն նպաստում են բերանի խո-  
ռոչը, ատամները, լեզուն: Մենք գիտենք  
նաև, որ հնչիւնները նոյն իսկ լինում են  
քթային, լեզւային ատամնային: Պարզ է, որ  
ատամնային հնչիւնը կարող է գոյութիւն ու-  
նենալ միայն այն դէպքում, երբ ատամները  
կանգուն են. կորցնելով ատամները, կորցնում  
ենք նաև այդ հնչիւնները: Իսկ եթէ զգալի  
է ատամների կորստի թիւը, մանաւանդ ներ-

քին ծնօտի առաջնատամների, այն ժամանակ  
նոյն իսկ դժւարանում ենք խօսելու: Բայց  
դրանից խօսած ժամանակն էլ անատամ մար-  
դիկ ակամա իրանց թուքը դիմացնի երեսովն  
են տալիս, որ զգանք է պատճառում:

Եթէ առաջնատամների մէկը կամ եր-  
կուսն է ընկած, այն ժամանակ խօսելիս լեզւի  
ծայրը յաճախ դուրս է պրծնում ընկած ա-  
տամների տեղով:

## V.

### ԱՏԱՄՆԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Քանի դեռ առողջ է արծնապակին, ոչ  
մի ճեղքուած չունի, առամը հիւանդանալու,  
փշանալու ոչ մի վտանգ չունի: Բայց բաւա-  
կան է, որ արծնապակին այս կամ այն պատ-  
ճառից մնասուի, այն ժամանակ ատամի հի-  
ւանդութիւնն անխուսափելի է, որովհետեւ  
բացւում է դէնտինը, որն արծնապակու կարծ-  
րութիւնը չունենալով չի կարողանում դի-  
մադրել արտաքին պատճառներին, ուստի ըս-  
ակառում է քայքայուել, փթել:

Այլպիսի քայքայման մեծութեանն ու-  
խորութեանը նայելով հիւանդութեան ըն-  
թացքը բաժանում է երեք շրջանի. ա) մա-

կերևոյքային, բ) միջին և զ) խոր—քայքայումն կամ փթումն:

Երեք գէպքում էլ առամի զգայուն մասը, պուլպան չի բորբոքւում, ուրեմն և չի ցաւում: Պուլպան սկսում է ցաւել միայն այն գէպքում, երբ նրա վրա ազդում են արտաքին պատճառները, օրինակ տաք ու պազ ջուրը, ուտելիքը, սառ օդը: Իսկ այդ բացատըրում է նրանով, որ պուլպան շրջապատղ գէնտինը փթելուց բարականալով տաքի ու ցրտի ազդեցութիւնը հեշտութեամբ է հազրում պուլպային, որից նա սկսում է ցաւել: Բաւական է հեռացնել գրգռիչ պատճառը, իսկոյն կարում է նրա ցաւը: Այդ, ասում եմ, ցոյց է տալիս, որ պուլպան գեռ ևս չի բորբոքուել:

Այդ է պատճառը, որ առամների հիւանդութեան շրջանում ընդհանրապէս բժշկի չեն զիմում:

Բայց ո՞րպիսի չարաչար սխալ են զործում այդ գէպքում: Առաջին և երկրորդ, յաճախ նաև երրորդ կարգի հիւանդութեան ժամանակ առամներն ամենահեշտ կերպով են բժշկում, նոյնիսկ շատ անդամ առանց ցաւի. Դրա պատճառն այն է, որ պուլպան գեռ առողջ է լինում: Նմանօրինակ գէպքերում բը-

ժիշկը նոյնիսկ մի ընդունելութեամբ մաքրում է առամի խոռոչը, ախտահանութեան ենթարկում և տեղնուաեղը լցնում այս կամ այն նիւթով, որից յետո առամն այլևս չի ցաւում:

Իսկ եթէ ժամանակին բժշկին չենք գիտում, այն ժամանակ քայքայում է ամբողջ գէնտինը, բացւում է պուլպան և ապա վարակում ու բորբոքում: Ահա այդ ժամանակ արդեն սասաիկ ցաւեր են առաջանում և այդպիսի առամի բժշկութիւնն էլ բաւական զժւարանում է. առամին զիսչելն անասելի ցաւ է պատճառում հիւանդին, իսկ դրա բժշկութիւնը պահանջում է մեծ համբերութիւն թէ հիւանդի և թէ բժշկի կողմից:

Պուլպայի հիւանդութիւնները կոչւում են պուլպիս:

Պուլպիտները լինում են մի քանի տեսակ. երբ բորբոքում է ամբողջ պուլպան—կոչւում է ընդհանուր պուլպիս, երբ բորբոքում է միայն պուլպայի մի մասը—կոչւում է մատնակի պուլպիս, իսկ երբ գոյանում է նաև թարախ—կոչւում է բարախալից պուլպիս:

Թարախալից պուլպիտը վասնգաւոր հիւանդութիւն է. եթէ ժամանակին չի բժշկ-

ւում, կամ բժշկութեան անհնար դէպքում բով և պատճառ ենք գառնում նրանց ժամանակում, այն ժամանակ թարախն արմատախողվակով անցնելով ծնօաներին, կարող նրանց բորբոքումն առաջ բերել, փթացնելով բժշկելու համար արդէն յաճախ հարկաւոր է լինում ծնօաների օպերացիա: Աստամիջոցով թարախը կարող է ընկնել նաև այսպէս կոչուած Հայմերովեան խոռոչը, առաջ բերել նրա բորբոքումը, ապա անցնելով գանդի ուղեղաթաղանթին յանկարծակի մասպատճառել:

Այսպէս ուրեմն, տեսնում ենք, որ աստամի հիւանդութիւնները, եթէ ժամանակին չեն բժշկում—մարդուս նոյնիսկ մահ են պատճառում:

## VI.

**ԱՏԱՄՆԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱ-  
ՌԸ ԵԽ ՆՐԱՆՑ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ**

Մարդուս ատամները կարող են մինչեւ խորին ծերութիւնը գոյութիւն ունենալ, եթէ միայն խնամուեն, պահեն այնպէս, ինչպէս պահանջում է ատամների առողջապահութիւնը: Դժբախտաբար մենք շատ քիչ ուշադրութիւն ենք դարձնում ատամների վրա, ո-

րով և պատճառ ենք գառնում նրանց ժամանակում, այսից վաղ փչանալուն:

Աստամների փչանալուն նպաստում են հազար ու մի պատճառ, որոնցից գլխաւորներն են. ա) ատամների անմաքրութիւնը, բ) կերակրի լաւ չծամելը, գ) քրուտների ենրութիւնը, դ) ցուրտն ու սաբր, ե) սնունդը, զ) զանազան հիւանդութիւնները, է) ոգելից խմիչքները և ր) պատահական կայ անզիսկցաբար վնասումները:

Հիմա հերթով նայենք, թէ այդ պատճառներից իւրաքանչիւրն ինչպէս է ազդում ատամի վրա:

Ա) Բերանի կամ ատամների անմաքրութիւնը: Առաջին տեղը մենք տալիս ենք անմաքրութեան: Եւ իրաւ, ապացուցուած է, որ ատամների հիմանդութիւնների մեծ մասն առաջ է զալիս բերանն անմաքրուր պահելուց: Եթէ մենք ճաշից և ընթրիքից յետո մաքուր ջրով չենք ողողում մեր բերանը և ատամների արանքից չենք հեռացնում կերակուրների մնացորդը, այն ժամանակ այդ մնացորդը նեխուում, քայլախում է, թթւուաների ու գագերի վերածուում որոնք աստիճանաբար ազդեցով առամի վրա վերջիվերջո փչացնում են նրան: Ատամների անմաքրուր պահելուց է գոյանում նաև այսպէս կոչուած ատամնախը կամ խալողախը: Յաճախ ասամները պատռում են մի աւելորդ կարծր շերտով, որոնց գոյնը լինում է դեղին, մութ և սպիտակ:

Հենց այդ աւելորդ նիւթի շերտն է, որ կոյսյն, որ միջոց է տալիս ընդունած կերակուռում է ատամնաքարք: Ատամնաքարը ոչ այլ մարսելու, մի այլ կարենոր ծառայութիւնին է, եթէ ոչ փօշու, թուքի, մանրէներ և մատուցանում է: Կերակրի ծամելը նըւե ուրիշ նիւթերի մի զանգւած, որ տուած կաստում է ատամների և ծամող մկանների ու գալիս, ինչոյն ասացինք, անմաքրութիւնից ճնօտների զարգանալուն, որոնք սերտ կերպով կազուած են իրար հետ, ուստի աւելիքին ճնօտի սեղանատամների վրա:

Դրա պատճառն այն է, որ այդ ատամների մօտ են բացւում բերանի խոռոչում զետեղուած թուքի գեղձերը: Թուքը բերան կեղտոտութիւնների հետ շաղախ է կազմուածուում մօտիկ ատամները: Ատամնաքարը բաւական վնասակար է: Նա կարող է անցնել լնդերքի տակ, մինչև ատամի ծայրը, որից բորբոքւում են լնդերքը, ուռչում, փիսրուն են դառնում, մի փոքր դիպելիս արիւն է հոսում, հեռանում են ատամներից, որի պատճառով ատամները շատ անգամ սկսում են շարժուել: Ատամնաքարը եթէ ժամանակին չի հեռացն ում, որ միայն բժշկի գործն է, այն ժամանակ նա կարող է ծծել, ուտել ատամի արժատները և նրանց լնինելու պատճառ դառնալ: Բացի դրանից ատամնաքար ունեցողների բերանից սարսափելի հոտ է դալիս: Հոտ է դալիս և այն դէպքում, երբ ընդհանրապէս մաքուր չենք պահում մեր բերանը: Սակայն բերանի հոտը կարող է նաև ներքին գործարանների հիւանդութեան հետեւանք լինել:

Բ) Կերակրի լաւ ծամելը: Լաւ ծամելը բացի

այն, որ մարսելու մարսելու, մի այլ կարենոր ծառայութիւնին է ատամների ծամելը նըւե ուրիշ նիւթերի մի զանգւած, որ տուած կաստում է ատամների և ծամող մկանների ու գալիս, ինչոյն ասացինք, անմաքրութիւնից ճնօտների զարգանալուն, որոնք սերտ կերպով կազուած են իրար հետ, ուստի աւելի ամուր են պահում ատամները:

Ծամելու վրա մանաւանդ պէտք է լուրջ ու շայդրութիւն դարձնել երեխանների վերաբերմամբ:

Գ) Թթիուտսների ներգործութիւնը: Թթթուուններն անընդհատ ատամների հետ շփուեւակար է: Նա կրային աղերը: Թթթուունները, ինչպէս առաջ էլ ասել ենք, դրւիսաւորապէս արդիւնք են անմաքրութեան: Ատամների արանքներում մնացած կերակրի մնացորդները նեխուելով ութքի, փօշու, մանրէնների հետ շաղախ կազմելով կամայ-կամաց թթթուում են, քացախում և անդադար ազդելով առօսմի վրա առաջ բերում նրա քայքայումը: Թթթուունների շարունակ գործածութիւնն ևս առաջ է բերում ատամի քայքայումը, ինչպէս օրինակ սալորը, բալը և այլն: Այդ տեսափկ պտուղներ ուտելուց յետո անմիջապէս պէտք է բերանը ողողել մաքուր ջրով:

Եաքարը և զանազան քաղցրաւէնիներն ևս վատ են ազդում ատամների վրա, մանաւանդ երեխանների վերաբերմամբ: Եաքարն ինքնըստինքեան վնասակար չէ: սակայն բանն

այն է, որ նա բերանում փոխուում է կաթ և աթթառութիւնի ստուգայիշ յատկութիւննասումները: Ենդու անդամ պահանջնիւնի բերանի սպատճառով ատամը կարող է կոտրուել, ընկնել զողումը նոյնպէս շատ ցանկալի է:

Դ) Յուրտն ու Տամբը: Յայոնի է, որ տաքութիւնից մարմինները լայնանում, իսկ ցըրների փշանալուն նպաստում են նաև անկատից սեղմում են: Թէլի, տաք կերակրի ժամանում ու անառակ կեանք վարելը, խոնաւ սեմանակ մեր ատամների բաղադրիչ մասերը ու նկաները, մրսելը և այլն:

Բոշ չափով լայնանում են. եթէ թէլից կամ կերակրից յետո անմիջապէս ընդունենք պանողական միջոցները չմոռանալ. Ամեն օր 2—3 անգամ բերանը ողողակ ծառը, պաղպաղակ կամ մի այլ սառը նիւթ, այն ժամանակ տեղի կունենա ատամի յանկար ծակի կուչ գալը, որի ժամանակ կարող է գունած կերակուրը լաւ ծամել. գ) զզոյշ կեղծուել արձնապակին և այդպիսով ապագա հիւանդութեան բունր գառնալ: Եւ ընդհակառակ պաղ կերակրից յետո անմիջապէս պաղ ընդունելը, կարող է նոյնպէս արծնագակին վնասել:

Ե) Զանազան հիւանդութիւնները: Տեսակ-տեսակ հիւանդութիւնները, ինչպէս օրինակ տիֆր, սիֆիլիսը, տենըր, ստամոքսային հիւանդութիւնները պատճառ են դառնում ատամների փշանալուն:

Բացի զբանից այդ հիւանդութիւններից զէլ զործ ածած զեղերն ես վնասում են ատամները: Օրինակ սիֆիլիսի ժամանակ մարմնի մէջ ներմուծած սնդիկը լնդերքի վրա այն ազդեցութիւնն է ունենում, որ նրանք առելի փխրուն են դառնում, հեռանում են առաջներից, որոնք սկսում են շարժուել, նոյնիսկ թափուել:

Զ) Պատահական կամ անզիտակցաբար նախանդութիւնի մասումները: Եաւ անդամ պահանջնիւնի բերելով կարող է կոտրուել, ընկնել և այլն. օրինակ ընկոյզ կոտրելիս:

Դ) Յուրտն ու Տամբը: Յայոնի է, որ տաքութիւնից մարմինները լայնանում, իսկ ցըրների փշանալուն նպաստում են նաև անկատից սեղմում են: Թէլի, տաք կերակրի ժամանում ու անառակ կեանք վարելը, խոնաւ սեմանակ մեր ատամների բաղադրիչ մասերը ու նկաները, մրսելը և այլն:

Ե) Ամեն օր 2—3 անգամ բերանը ողողակ ծառը զրով և խողանակով սրբել. Բ) ընդունած կերակուրը լաւ ծամել. գ) զզոյշ կեղծուել արձնապական թիւական թթւուտներ զործածելուց. դ) ատամները ցրտից ու տաքից պահպանել. ե) ձեռք քաշել ողելից խմիչքներից, զ) չծիսել. է) կարծր իրերն ատամնով չկոտրել. ը) տարին 2—3 անգամ ատամները բժշկին ցոյց տալ:

Պէտք է երկու ձերի խողանակ ունենալ. մէկը զոգաւոր ատամները զբսից մաքրելու համար, միւսը կորնթարթ-ներսի կողմից:

Խողանակների կատարած զերը կայանում է նրա մէջ, որ ատամների վրայից և արանքներից հետացնի կերակրի մնացորդները. ուստի անհրաժեշտ է, որ սրբելիս նրա մազերն ատամների արանքը մտնեն: Վերին ծնօտի ատամները մաքրելիս խողանակը պէտք է վերեից ցած բերենք, առանց կրկին անդամ յետ տանելու, իսկ ներքին ծնօտի ատամների վերաբերմամբ ընդհակառակը:

Խոզանակը գործ ածելուց յետո պէտք է  
լաւ մաքրել և ապա յատուկ ամանի մէջ պա-  
հել, այլապէս նա կարող է կեղոսուել և իր  
նպատակին չծառայել:

Ստամերը մաքրելու համար ամենալաւ  
միջոցը մաքոր ջուրն է. իսկ եթէ այսպէս  
կամ այնպէս ուզում են փօշի գործ ածել,  
այն ժամանակ ամենանալատակայարժար փօ-  
շին լաւ աղած մաքոր կառնի փօշին է ա-  
նանուի հետ միասին (очищенныйный мёлъ  
съ мятой):

Երեխաները յաճախ սովորութիւն ունեն  
մատաները ծծելու. այդ սովորութիւնն առամ-  
ների ծուռ բուսնելուն սպառձառ է դառնում:

Եթէ այս կամ այն պառձառից երեխայի  
առամները ծուռ են բուսել, կար յաւում են,  
անմիջապէս պէտք է բժշկին դիմել:

Երեխաների առամները երբեմն շատ  
գժւարութեանք են դուրս գալիս և սասարիկ  
ցա եր են սպառձառում. Այս գէպքում անհ-  
րաժեշտ է նոյնպէս զիմել բժշկին, որը կտրելով  
լնգերքն ազատում է երեխային ցաւերից:

Այսպէս, ուրեմն, ծնողների վրա պարտք  
է դրւում առանձին ուշաղրութիւն զարձնել  
մանկան առամների վրա. Թո՞ղ չմոռանան,  
որ յաճախ երեխայի ընդհանուր առողջու-  
թիւնը կախուած է առամների լաւ ու վատ  
պահելոց:

Վ. Ե. Բ. Զ.

«Ազգային գրադարան



NL0273681

Դ-ր Վ. Արծունու նրատարակութիւնուրբ

- 1) Փանտախտ (մի քանի օրինակ միայն) 20 կ.
  - 2) Խօլերայի մասին (սպառ.), 3) Խօլերա (սպառ.)
  - 4) Հիպնոտիսմ. հատ. 1. (սպառուած) . . . 25 կ.
  - 5) Հիպնոտիսմ. հատ. 11. 15 կ., 6) Դպրոցական  
առողջապահութիւն (պատկերազարդ) . . . 50 կ.
  - 7) Առողջ երեխաների խնամատարութիւն 25 կ.
  - 8) Սիֆիլիս, Կոկուղ շանկը, Սուսունակ 25 կ.
  - 9) Թշւառների բարեկամ բժիշկ Համազ . . . 20 կ.
  - 10) Ամուսնութիւն . . . . . 75 կ.
  - 11) Աղջիկ (առողջ. և բարոյագիտ. էտիւդ) 75 կ.
  - 12) Մանկիկ նկարազարդ . . . . . 40 կ.
- |                 |   |
|-----------------|---|
| ԲԺՇԿԻ ԶՈՒՅՑՆԵՐԸ | № 1. ՄԻ ԽՄԵՐ, երկ. տալ. (նկարներով) 5 կ.                                      |
|                 | № 2. Վ.Ա.Տ 8Ա.Ի (նկ. սպառուած) . . . 6 կ.                                     |
|                 | № 3. Վ.Ա.Ր.ՍԿ.ԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ<br>ԵՒ ՆՐԱՆՑ ԹՈՅՑՆԸ (23 նկ.) 15 կ.           |
|                 | № 4. ԹՈՅՑԱՆ ԿԱՄ ԲԱՐԱԿԱՑԱԻ (նկ.) 10 կ.   |
|                 | № 5. ԴՈՂԵՐՈՌՑՔ ԿԱՄ ՄԱԼԱՐԻԱ (նկ.) 5 կ.   |
|                 | № 6. ԻՆՖԼՈՒԵՆՑԱԿԱՄՆՈՐ 8Ա.Ի(նկ.) 3 կ.  |
|                 | № 7. ՄԻ ԾԽԵՐ . . . . . 5 կ.   |
|                 | № 8. ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻ-<br>ԿԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ (նկ.) . . . 5 կ.                |
|                 | № 9. Վ.Ա.Տ 8Ա.Ի ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍ. Երկրորդ<br>հրատարակ. ա. մասն (9 նկ.) . . . 20 կ. |
|                 | № 10 Վ.Ա.Տ 8Ա.Ի ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍ բ. մասն 20 կ.                                     |
|                 | № 11 ԾԱՂԻԿ ԵՒ ՊԱՏԻԱՍ 15 կ.  |
|                 | № 12 ՑՂԻ ԿՆՈՉ Ա.Ո.ՊՂ.ԶԱՊԱՀՈՒԹ. 10 կ.  |
|                 | № 13 ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ 15 կ.   |

Լոյս են տեսել «Բժշկի թերթիկներ». № 1 Մի խմիր.  
№ 2 «Նուեր ծննդկաններին, ծախ. 100-ը և ու. Դըմել խմր.

**ՀանգԵն.** Тифлисъ, редакція «Аюогджапаик терт»  
Сергіевская № 15